

ՍԻՈՆ



Ս · ՑԱԿՈՒԹՅԱՆՑ ՎԱՐ ՏԱՅՈՑ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

«سيون»، مجلة ارمنية شهرية، دينية، أدبية، ثقافية، للغة والبيان.
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

ՅԱՎԱՆԴԱԿԱՆԻ ԹՐԱԿԱԿԱՆ

ԵՐԵՒ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ

- Ս. Յարուբեան Տաճարի նորոգութեան ի խնդիր համգանակութեան
ձեռնարկը Հիւսիսային Ամերիկայի մէջ 33

ԿՐՈՆԱԿԱՆ

- Խղճմաներ ԳՐ. Ա. ՌԱՐԱՔԵԱՆ 37
— Ասախօսութեան մելքր ԳԵՂՋԻ Ա. ՃԵՆԻՊԵՂԵԱՆ 41

ԲԱՆԱԼՈՏԵՂԾԱԿԱՆ

- Մեղքի ռուսաներեց (Նեղոսի լուսար) ԵՐ. Խ. ԱՐՄԵՆԻ 43
— ... Գովերդ ի՞նչպես շընեմ ևս Գ. ԱՐՄԱՐ 47

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

- Ճառ. ի Ս. Վկայան Քրիստոփ Դ. ԵՊՈ. ՆՈՎՈՎՈՅՆ 48

ՀԱՅԻԱԿԱՆ ՎԱՐԺԵՐ

- Կեշառուք Պ Պ Պ 50

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ

- Հեռագիրներ 51
— Ելեղեցականք - Բեմականք 51
— Պատօնականք 52

Հ. Բ. Բ. Միուրեան Դախարան Տիու Ալեքս Մանուկեանի Ճառը 53

Հ. Բ. Բ. Միուրեան Անդամական Ընդհ. Փողովի Ասենազրութիւնը 58

Զեկոյց Դալուս Կիւղեներեան Հիմնարկութեան — Հայկական Գործեր 63

ՍԻՈՆ - ի Տարեկան Բաժնեզինն է,

բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Եթին 20

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001.

Old City - Jerusalem (Jordan)

ՍՈՒՐԵ

Լ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1963

◀ Փետրուար ▶

Թիւ 2

ԽՄԲԸԳ-ՐԾԿԱՆ

ՍՈՒՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՀԱՐԻ

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ Ի ԽՆԴԻԲ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷԶ

Ամիսներ առաջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Սփիւռքի բովանդակ հայութեան ուղղած իր սրբատառ կոնդակով, սրտազին հրաւէր կ'ուղղէր Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր հարազաներուն, որ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան գործին բերենց իրենց ամբողջական մասնակցութիւնը։ Ուրախ ենք այս առիթով հոս յայտաբարել կարենալու՝ որ նորին Ս. Օծութիւնը ստանձնած է նոյնպէս Հիւսիսային Ամերիկայի մէջ արդէն իսկ կազմուած Կեղրոնական Յանձնախումբի նախազանութիւնը, և իրեկ պետք Յանձնաժողովի խրաքանչիւր անդամին զրկած է առանձին զիր, հրաւիրելու համար բոլորը իրենց այս պարտականութեան, ինչպէս նաև հրահանգելու ամէնքը որ քաղցր յօժարութեամբ կատարեն իրենց բաժին ինկած մասը, ազգային և Եկեղեցական այս նուիրական Արքավայրի նորոգութեան ի նպաստ ըլլալիք հանգանակութեան ձեռնարկին մէջ։

Կեդրոնական Յանձնաժողովի կազմը կը բաղկանայ, Ամենայն Հայոց Հայրապետի զիսաւորութեամբ, հետեւալ անձնաւորութիւններէ. —

ՆՈՐԻՆ Ս. ՕՌՈՒԹԻԻՆ Տ. Տ. Վ. Ջ. Զ. Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ,

Ամեն. Տ. Եղիշէ Արքեպո. Տէրտիեան, Պատրիարք Հայոց Ս. Երոսակէմի,

Գերե. Տ. Սիօն Արքեպո. Մանուկիան, Առաջնորդ Հիւս. Ամերիկայի,

Գերե. Տ. Սերովիկ Արքեպո. Մանուկիան, Կար. Պատուիրակ Եւրոպայի,

Գերե. Տ. Բարգէն Եպս. Ապատեան, Կար. Պատուիրակ Հար. Ամերիկայի,

Մեծայարդ Տիար Հայի Դավթինեան,

» » Ալեք Մանուկիան,

» » Զարլզ Գարակիօվեան,

» » Յովհաննէս Տիարակիրեան,

Ս. Յարութեան Տաճարին ի նպաստ հանդանակութեան գործը, առայժմ Հիւսիսային Ամերիկայի մէջ, իր ընդհանուր զիծերով ամփոփելէ վերջ, իրաւունք ունենալ կը կարծենք ըսելու թէ համազգային այս ձեռնարկը ամենուրեք արթնցուցած է մեծ շահազրգութիւն ինչպէս նաև պատրաստակամութիւն, ի զին ամէն բանի հայթայթելու պահանջուած գումարը, որպէսզի ամենադոյզն շափովն իսկ չնուազի մեր Եկեղեցին ու ազգին դիրքը, կրօնական ու ցեղային իրաւունքներու մրցարանը հանդիսացող Ս. Երկրին մէջ: Աշխարհի չորս ծագերուն ցրուած Սփիւռքի մեր ժողովուրդը, որուն համար շատ անզամ չոր ու շուկայիկ մտածումներէ տարուող միտքերը կը խորհին թէ ան իր նիւթական տպրուստին հոգը միայն ունի ի նկատի, զիտէ մէկ սիրտ և մէկ հոգի գառնալ, ի խնդիր իր մտաւոր և հոգեկան արժէքներու պաշտպանութեան: Վասնզի մեր ժողովուրդը զիտէ իր պատմութենէն, ինչպէս նաև հանապազօրեայ իր ապրումներէն թէ՝ հաւատքը, հոգեկան արժէքները, շատ աւելի կարևոր են ժողովուրդի մը զոյութեան համար, քան նիւթական առօրեայ մտախոհանքը. ի վերջոյ յաւիտենական է ճշմարտութիւնը թէ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»:

Հրաշալի է երեսյթը, որ մէկ կողմէ օտարներու առջև կը յայտնազործ մեր տկարութիւններուն ներքեւ անտեսանելի դարձած հոգեկան գեղեցկութիւններ, միւս կողմէ կրնայ զմեզ սրտապնդել այն մտածումով՝ թէ հակառակ ամենուրեք մեր այժմու անմիաբանութեան, մեր մէջ կան տակաւին միութեան տոիթներ և կէտեր, որոնց չուրջ կարելի է համախմբուիլ ազգովին, զիրար հասկնալու և անցեալի նուիրականութեանց յուշով կազդուրելու ներկայի զզացումը և ապազայի յոյսը:

Երկրորդ պարագան, զոր անհրաժեշտորէն կ'ուզենք մատնանշել հոսանքը բուն զաղանիքը ամբողջ Սփիւռքի այս խանդավագութեան, կրօնական և ազգային արժէքներու և անոնց շուրջ անչփոթ միաւորութեամբ զզացուած այն ողին է, որ մեր պատմութեան և ճակատազրին բոլոր ելեէջներուն վրայ, մեր տիսուր և պայծառ թուականներուն վերև սաւառնող խորհուրդը եղած է շարունակւ կրօնական հաւատքին զզացումն է որ թե կու տայ գեռ մեր հոգիներուն. նկատի անեցէք որ հարցը մեր հաւատքի դարաւոր կոթողին՝ աշխարհամատուր Ս. Յարութեան Տաճարին կը վերաբերի, որ ամէն բանէ աւելի և վեր մեր կրօնակին ու հոգին մարտկոցն է, և ոչ թէ պարզ շէնքի մը: Այս է զզացումը Սփիւռքի բովանդակ մեր ժողովուրդին անաբարակոյս, և անոնց՝ որ լծուած են այս զործին, ինքզինքնին մտադիւր ենթարկելով անոր պարտազրած ամբողջ տաժանքին:

Բասած ենք ու նորէն կը կրկնենք, անցեալէն մեզի եկած թանկազին և սրբագան ժառանգութիւններ են Ս. Տեղեաց մեր իրաւունքները, մեր հաւատքին անփշրելի անօթները: Կրօնը և անով Հայ Եկեղեցին մեր կեանքին լուսաշաւիղն է: Դարերու ընթացքին, հակառակ մեզի պարտազրուած դժնդակ պայմաններուն, արեգերական բանակալութեան, մեր ցաւին հանդէպ եղեռնային անտարբերութեան, Հայ ժողովուրդը չնորհիւ իր Եկեղեցիին և պապերու ողիին, պահեց իր ինքնութիւնը և անդենականի յոյսին և հաւատքին զեղեցկութիւնը: Մեր հոգեկան և իմացական արժէքներու զուրգուրանքը աւելի քան երեք պէտք

Է ահական մտասեռումը բլլայ մեզի համար, առով արժեարելու մեր ներս
ցեղային այն ոգին՝ որ այսօրուան մեծ և փոքր ժողովուրդները այրող տեսպն է:

Դժնդակ օրեր ճամբայ են ելած դէպի մեր հաւաքական զոյութեան
մերձաւոր ապառնին, մեր նուիրական սրբութիւններուն ու մեր Եկեղեցին,
մեր լեզուին և աւանդութիւններուն, աննահանչ, միտակուր, այլամերժ և վայ-
րագ պաշտամունքը՝ դրօշակն է մեր բախտաւոր համախմբումին և զոյտահան-
իր հայրենի Աստուածը և անցեալի նուիրականութիւնները ուրացող մարդը իր
հայրերու յիշատակը կոխվրատող սիրտ մըն է:

Երրորդ կէտը, որ այս զործի յաջողութեան մղիչ ու պայծառ զգացումը
կը հանդերձէ, Ամենայն Հայոց Հայրապետի անձին ու փափաքին հանդէպ ցոյց
տրուած յարգանքի, սիրոյ և հասպանդութեան կեցուածքն է բովանդակ Սփիւրի
մէջ: «Հրաման ի Տետոնէ», Էջմիածինն է որ կը պատուիրէ, Մօր Ճայնն է որ
կ'արձագանգէ հոգիններուն խորը, «Եկայք շինհոցուք սուրբ զխորանն լուսոյ»:
Եւ այդ Ճայնը, արեւոտ ճամբայ մը ինչպէս, կ'երկարի ժամանակներու և միտ-
քերու բոլոր փլուզումներուն մէջէն, դէպի մեր աւանդական ու նուիրական
զգայնութեանց փրկարար ամրոցը, միւռոնի սրբութեամբ կաթկթելով ամէն Հա-
յու սիրտէն ներու:

Նոյնքան բարենշտն է անտարակոյս համերաշխ շահոգրգութեան այն
երեսյթը զոր մեր ժողովուրդի բոլոր հատուածները ցոյց տուին և կու տան,
իրենց թերթերուն միջոցաւ, արտատպելով բոլոր հաղորդագրութիւններն ու
յօդուածները, և լուսաբանելով հանրութիւնը Ս. Յարութեան Տաճարի Հայոց
բաժնի նորոգութեան շուրջ և անոր կարեւորութեան մասին, խորապէս զգալով և
զգայնելով բոլորին թէ այս զործը սրբազն պարտականութիւն մըն է, կարօտ
բովանդակ Հայ ժողովուրդին օժանդակութեան:

Չէինք խարուած մեր զգացումներուն և ակնկալութիւններուն մէջ, երբ
Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան մեծագումար ծախքի մասին զրելով,
կը յայտնէինք թէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուսերուն զրուած այս
ծանր բայց սրբազն պարտականութիւնը միայն մերը չէ, այլ բովանդակ Հայ
ժողովուրդին, և վստահ էինք որ մեր Ազգային Հաստատութիւնները, կրօնազգած
և ազգանուէր ուներուները, և առնասարակ բովանդակ Հայութիւնը միահամուռ,
թոյլ պիտի չտային որ Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ այնքան կարեւոր
այս Աթոռուն կապուած, սակայն բովանդակ Ազգին պատկանող, Ս. Տեղեաց մեր
իրաւունքները մնային անպաշտապն ու անվճար, և պիտի ընէին իրենց առա-
ւելազոյնը, լաւազոյնս հոգալու Ս. Յարութեան Տաճարի Հայոց բաժնի նորոգու-
թեանց ծախքը և ապահովելու մեր իրաւունքները:

Այժմ՝ ուրախ ենք յայտարարելու որ Ս. Յարութեան Տաճարի վերանո-
րոգման համար ձեռնարկուած հանդանակութեան զործը իր յաջող և արդիւնա-
ւոր ընթացքին մէջ է, Հիւսիսային Ամերիկայի մեր պատուական հասարակու-
թեան չափերուն չնորհիւ: «Սիոն»ի Օգոստոս-Աեպտեմբեր միացեալ թիւի
Խմբագրականին մէջ ուրախութեամբ և երախտագիտութեամբ անդրադաս-
էինք արդէն Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան բերած իշխանական մաս-
նակցութեանը, որ Ս. Յարութեան Տաճարի Հայկական բաժնի նորոգութեան կը

ԿՐՈՆԱԿԱՆ

ԽԱՀՄՏՍՈՒՔԸ

•

«Ո՞շափ եւս առաւել արիսն Քրիստոփի, որ ի ձեռն Հոգևոյն յափեանկանի մասոց զանձն անարա պատազ Ասուծոյ, սրբաց զիփին մատ ձերց ի մեռեափ զործոց անի՛ պատել զիսուած կենդանի» (ԵԲԲ. Թ. 14):

Հին Աւետի օրէնքով՝ ցուցերուն և նոյազներուն արեան և երինջներուն մոխիքին սրսկումով՝ պղծեալները կը սրբուէին: Երբայիցոց Թուղթին հեղինակը, ասիկա իր աչքին առջև ունենալով, Քրիստոսի արեան առաւելութիւնը և փրկարար գերը բացատրելու համար կ'ըսէ: «Հապա ուշափ տւելի Քրիստոսի արիւնը, որ յափեանկան նոզիին ձեռնով իր անձը անարա պատարազ մատոյ Ասուծոյ, պիտի սրբ ձեր խոնմանքը մեռած զործեւէ, կենդանի Ասուծուածը պատելու համար:

Այս խօսքը երկու կարեսոր իրոզութիւններ կը մատնանչէ: Մէկը այն է թէ այս աշխարհի մեռած գործերով խղճմտանքը կրնայ պղծուիլ, իսկ միւսը՝ թէ Յիսուս Քրիստոսի արիւնը կարող է մեր խղճմտանքը սրբել բոլոր ազականութիւններէ և մեզ առաջնորդել կենդանի Ասուծուածը պաշտե-

լու: Կրօնաքը խղճմտանքի հետ սերտ աղերս ունի, մանաւանդ Քրիստոնէութիւնը հաւատացեալներէն կը պահանջէ ունենալ մաքուր ու ամրիծ խղճմտանք, ինչպէս Պողոս առաքեալ ի միջի այլոց կ'ըսէ Տիմոթէոսին: այս ունենած հաւատի ու մահուր խոնմանք» (Ա. Տիմ. Ա. 19): Քանզի առանց մաքուր խղճմտանքի կարելի չէ ապրիւ քրիստոնէական կեանքը:

Ա. — Ի՞նչ է խոնմանքը. — Խղճմտանքը մեր բնաւորութեանը մէջ դրուած հոգեկան այն ընդուծին կարողութիւնն է, որով կը զանազաննենք շիտակը սխալէն, բարին՝ չարէն, օգտակարը՝ վեասակարէն, իրականը՝ կեղծէն և աստուածահանոյ արարքը՝ մարդանոյ արարքներէն: Ինչպէս ականջը ձայնը կը լսէ և աչքը առարկաները կը տեսնէ, նմանապէս խղճմտանքը կը զգայ մարդու մը արարքներուն բարի կամ չար, շիտակ և կամ սխալ ըլլալլը: Մարդկային ամէն էակ ունի այս խղճմտանքը: Հետեաբար իւրաքանչիւր ոք կարող է բարին ընտրել և չարէն խորչիլ, եթէ կամի և եթէ հաւատաբիմ մնայ իր ողջամիտ գատաղութեան և ապրի ըստ այնմ կեանքի գոյացարտին մէջ:

Հաս «Ինքնօգնութիւն» գրքի հեղինակ Սկովտիացի Մամուէլ Մմայլզի, «Խոնմանքը մարդկային նոզիի յատուկ կարուլուրիւն մըն է, զոր կրնանք կրօնական բնազդ կոչել»: Անիկա, որպէս արդարութեան լաւագոյն պաշտօնեայ, վմարդուս վստահելի առաջ-

յատկացնէր 100,000 Անզլ. Ասկիի զումար մը, մէկ երրորդը Երուսաղէմի Հայ Պատրիարքարանին բաժին ինկած ծախքին, յիշեալ Տաճարի վերանորոգութեանը մէջ: Բնաւ չենք տարակուսիր թէ Սփիւրքի միւս կեղրոններուն մէջ ևս, երբ յանուն երսւսաղէմի՝ բայց մանաւանդ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան դիմուի մեր բարեկրօն և իր սրբութիւններուն նկատմամբ պաշտամունք ունեցող հարազատներուն, անոնք պիտի զիտնան բանալ իրենց սիրտերը, նիւթական այս նուիրաբերման մէջ, վճարելու համար հոգետուրքը իրենց կրօնի այս աշխարհամատուու կոթողին, որ մայրն է քրիստոնէական բոլոր Եկեղեցիներուն:

Լաւ սկզբնաւորութիւն մը, ինչպէս կ'ըսէ առածը, լաւագոյն վերջաւորութեան մը հաւասարիքն է: Աղօթենք ի սրտէ որ եկեղեցական և ազգային այս ձեռնարկը, չնորհիւ մեր ժողովուրդի ամենածանօթ նուիրաբերման, յաջողութեամբ պատակուի, և ասիկա նախ ի փառս Աստուծոյ և ապա ի պարծանս և ի վայելումն մեր հոգեռանդ և եկեղեցանուէր ժողովուրդին:

նորդն է ու խրատատուն։ Աստուած է որ զրած է զայն մեր հոգիներուն մէջ։ Անգլիացի բանաստեղծ Լորտ Պայրըն կ'ըսէ։ «Մարդկային խղճմաններ Աստուածոյ պատգամախօսն է»։

Ժան Ժագ Ռուսոյի տեսութեամբ, պանականութիւնը կրնայ մեզ խաբել, սակայն խղճմաններ ոչ երբեք։ Իսկ Գերմանացի հեղինակ Լազարթը՝ կ'աւելցնէ։ «Խղճմաններ աւելի իմաստուն է քան զիտուրիւնը։ Զյանցիմանուելու համար խղճմաննքն՝ անոր հնագանդիլ պէտք է։ Առկրատ կ'արտայայտուի այս ուղղութեամբ հետեւալ բառերով։ Աշմոզուած եմ քե չենք կրնար լաւազոյն կեսնի մը ապրիլ առանց լաւազոյնը փնտուելու եւ ոչ ալ աւելի հանելի ըլլալ՝ առանց բարի խղճմանն մը ունենալու։ Ռոզինետն, ինչպէս Ս. Օգոստինոս կ'ըսէ։ «Բարի խղճմաններ Քրիստոփի պալան և Ս. Հոգիին Տաճարը, երջանկութեան դրախտը եւ սուրբերուն հանգստութեան կայսեր»։ Իսկ Ռոզինէս հայրապետ՝ խղճմաննքը աւելուանքը «Ալգարութեան խորհրդարանը» կը կոչէ։

Հետուարար խղճի ձայնին հետեւիլ՝ Աստուածոյ խորհրդարանին արդար խորհրդաներուն հետեւիլ կը նշանակէ։ Իրրե մարդ և իրրե հայանք, մեր երջանկութիւնը կը կայանայ մեր խղճմաննքին համեմատ ապրելու մէջ։ Խղճմաննքը նախ մեզ կը խրատէ իրրե անկեղծ բարեկամ, իսկ եթէ իրեն չհնազանդինք՝ յետոյ կը պատժէ մեզ իրրե արդար դատաւոր։ Ճօրճ Պէնքրօֆթ կ'ըսէ։ «Խղճմաններ նոգիի հայելին է որ կը ցուցնեմեզիք մեր ապրած կետնին սխանները այնպէս՝ ինչպէս որ են անոնք իրենց խկութեանը մէջ։ Իսկ ուրիշ հեղինակ մը՝ Օկի, կ'ըսէ։ «Բարի խղճմաններ երեխն դրախտ սիրոյն կը ծախուի, բայց բնաւ չի զնուիր դրամով։

Ագան ու զրամապաշտ առետրական մը մի քանի գանձկան աւելի զրամ շահելու համար երբեմն իր կեղծ ապրանքը իրրե իրական ապրանք կը ծախէ։ ասով թէս մի քիչ աւելի զրամ կը չահի, բայց իր խըզճմաննքը կ'արտաւորէ, և այդ արտար դրամով չի սրբուիր։ Թոգմաս Քէմբացի կ'ըսէ։ «Երանելի է այն մարդը որ կը զգուանայ այն ամեն բաներեն՝ որոնք կ'արտա-

ւորեն իր խղճմաններ։ Մեր խղճմաննքը ամբիծ պահելու համար պէտք է որ միշտ զգոյշ ըլլանք և խոհեմութեամբ չարժինք։

Բ. — Խղճմաններին առընչութիւնը խոնին մուրեան նես։ — Հին ատեն յոյները մարդ մը խղճմաններ կը համարէին երբ ան կարող էր զանազանել խոհեմութիւնը անխոհեմութենէ։ Քանզի խոհեմը այն է որ կը զգուշանայ ամէն ատեն սխալ արարքներէ և կ'ապրի միշտ իր խղճի ձայնին անսաւով։ Իսկ անխոհեմը՝ ընդհակառակը, ողջմառաթենէ հրաժարած՝ սանձարձակ կեանքի մը կը հետեւի, առանց նկատի առնելու իր խղճմաննքին ազդարարութիւնը։ Հոովմէտացի բանաստեղծ հեղինակառարէ։ Անկան մը լաւազոյն յատկութիւններն իսկ վնասակար են երկ խոնինութեամբ համեմուած ըլլան։

Խոհեմութիւնը տեսակ մը բարոյական փափկանկատութիւն է, որ զիտէ ուղիղ խօսքը ուղիղ ատենին խօսիլ, կը զգուշանայ կոչտ արտայայտութիւններէ ու արարքներէ և զիտէ մանաւանդ լուելու ժամանակը։ Ասոնք ուրիշ բաներ չեն, բայց եթէ խղճմանն մարդու մը ապրելակերպի յատկութիւնները։

Խղճմաննքը և խոհեմութիւնը իրարու հետ սերտ աղերս ունին։ Ուր որ խոհեմութիւն կայ՝ հոն խղճմաննքի ձայնը աւելի հեշտութեամբ կը լսուի, և ուր որ խղճմաննքը կը թագաւորէ՝ հոն մարդիկ աւելի կը փարին խոհեմութեան։ Խոհեմութիւնը սեղով կը հասկնանք աստուածային իմաստութիւն, բարիին, ճշմարիտին և զեղեցիկին հանդէպ գնահատութիւն և ակնածանք։ Հետեւարար ով որ աստուածային իմաստութեան այս երկնային չնորհներովը օժտուած է, չի կրնար խղճմաննքի հակառակ վարձունք ունենալ։

Եմբըսն՝ խոհեմութիւնը զգայարանեներու առաքինութիւնն կը նկատէ։ Իսկ ճօն Միթթընի տեսութեամբ, «Խոնինութիւնը այն առաքինութիւնն է՝ որով կ'որուենք տելոյն, ժամանակին եւ զանազան պարագաներու ենթել խօսիլ, եւ կամ ընել այն՝ ինչ որ պատօն է եւ վայելուչ։

Խոհեմը իր խօսելիքին և ընելիքին վրայ կը խորհի, և իր ամէն մէկ բառը խօսելէ և

մէն մի արտքը կատարելէ առաջ Արծորէն կը հւսէ, կը չափէ և ապա կ'արտայայտուի ու կը գործազրէ Խոհեմը կը զգուշանայ բարկութենէ, կրքոտ արտայայտութիւններէ, վայրկենական պոսթկութերէ և կը վարուի մարդոց հետ քաղցրութեամբ, սիրով և քրիստոնէավայի համեստութեամբ: Տակիսոս կ'ըսէ. «Խոհեմուրեամբ աւելի զործ կենան արտարիկ խոն թէ ոյժով»: Այժմ երբեմն կը պարտուի, բայց խոհեմութիւնը միշտ յաղթանակ կը չահի:

Համ հրէից առակախօսին, «Խոհեմը իր զիցածը չի յայտնիր, բայց յիմարեներուն սիրը յիմարութիւն կը հաւատակի» (Առակ. ԺԲ. 23), «Միամիտ մարդը ամեն բանի կը հուատայ (կը հետեւի), իսկ խոհեմը իր բայլերը կը նենեկ» (Առակ. ԺԴ. 15), «Խորագէր շարիկը կը տեսն եւ կը զգուանայ, իսկ միամիտները յառաջ կ'անցնին ու կը վիստուին» (Առակ. ԺԲ. 3): «Խելացին (խոհեմը) կը լրէ այն ատեն, կ'ըսէ Առովս մարդուն, եթք ժամանակը չար է» (Ե. 13):

Խղ ճամփոտ մարդ մը ասէէ տարեկը ապրելակերպի մը չի կրնար հետեիլ: Եթէ մէկը խղ ճամփոտ է՝ խոհեմ է նաև, և եթէ խոհեմ է՝ խղ ճի հակառակ բաներէ կը զգուշանայ:

Գ. — Երէ խղնմաներ Ասոււծոյ ձայնն է, ինչու մարդոց խղնմանները կը տարբերին իւրաքանչ. — Մարդոց խղ ճերը իրարմէ կը տարեկին անոր համար որ իրարմէ տարեկը ընտանիքներու մէջ ծնած, տարեկը միջավայրի մէջ մեծ ցածրած, տարեկը գաստիարակութեան հետեած ու տարեկը կրօններու ազգեցութեան ներքե իրենց ներշնչումները ստոցած են:

Հետեարար մարդու մը խղ ճամփանքին վրայ մեծապէս կ'ազգեն իր ապրած ընտանիքի ընկերական ու բարոյական սովորութիւնները, միջավայրին ըմբռնումները, ստացած գաստիարակութեան իրեն տուած տարեկերպի չափանիշները և իր պատկանած կրօնքէն և կամ յարանուանութենէն առած իտէալներն ու կրած տպաւորւթիւնները:

Այս իսկ պատճառաւ, Հնդկաստանի մէջ ապրած Պուտտայականի մը խղ ճամփանքը կը տարեկի Եգիպտոսի մէջ ապրած Մահմետականի մը խղ ճամփանքէն, Ամերիկայի մէջ ապրած Քրիստոնեայ հաւատացեալի մը

խղ ճամփանքը կը տարբերի Ափրիկէի մէջ ապրած մարդակեր հեթանոսի մը խղ ճամփանքէն:

Բայց պէտք չէ մտահան ընել որ այս տարբերութիւնները տեսակի տարբերութիւնները ըլլալէ աւելի աստիճանի տարբերութիւններ են: Ամէն մարդու մէջ ալ խղ ճամփանքը Աստուծոյ նոյն ձայնն է, բայց մարդիկ այս ձայնը կ'ըմբռնեն իրենց մտքի կարողութեան և ունեցած լոյսին աստիճանական չափովը: Աւստի կիսակիրթ ժողովուրդներուն խիզճը վայրենի ժողովուրդներուն խիզճէն աւելի զգայուն է, իսկ քաղաքակիրթ ու ազնուացած ժողովուրդներուն խիզճն ալ առաւել ես զգայուն է քանի կիսակիրթ ժողովուրդներուն խիզճը: Այն որ քիչ լոյս ունի, անոր համեմատ պիտի գատուի, բայց այն որ աւելի լուսաւորուած է, եթէ այդ լոյսին համեմատ չապրի: Աստուծոյ առջեւ աւելի ծանր դատապարտութեան պիտի ենթարկուի:

Մարդ ի բնէ հոգեսոր ընդունակութիւններով օժտուած էակ մըն է և Աստուծոյ պատկերը կը կրէ իր վրայ, անոր համար որ Աստուծոյ հոգիէն մասնիկ մը և կամ կայծ մը ունի իր մէջը: Եւ պատճառը այս է որ ան առգորուած է արդարութեան զգացումով՝ որուն խղ ճամփանք անունը կուտանք, և որ կ'ազնուանայ ու կը նրբանայ այնքան միայն՝ որքան անհատը ազնուանայ և զարգանայ հոգեսոր կեանքի մէջ:

Աստուծած մարդերը կը դատէ իրենց այս խղ ճամփանքի լոյսի աստիճանին համեմատ: Խիզճը անզիր աւետարան մըն է: Հեթանոս մը, որ տեղեակ չէ քրիստոնէական կրօնի բարձր լոյսին, պիտի գատուի իր խղ ճի անզիր աւետարանին իրեն տուած լոյսովը: Հեթանոսաց առաքեալը այս մասին սապէս կ'արտայալուի. «Հեթանոսները որոնք օրէնք չունին՝ եթք բնականբար օրէնքին զործերը կը գործեն, օրէնք չունենալով՝ իրենց անձեռուն օրէնքը բուն իրենց կ'ըլլան, օրոնք օրէնքին զործը իրենց խղնմանքին վկայութիւնովը եւ իրենց խորհուրդներուն իրար յանդիմանելովը կամ իրաւուն տարովը, այն օրը եթք Աստուծած մարդոց ծածուկ բաները պիտի դատէ Յիսուս Քրիստոսի ձեռամբ իմ բարոցած աւետարանին համեմատ» (Հռովմ. Բ.

14-16): Աստուծոյ այս ահաւոր և արդար գատաստանին առջև գատապարտութենէ ազատ մալու համար բարի խղճմտանքով ապրիլ պէտք է մեր կեանքը: Բարի խղճմտանքը թանկագին գանձ մըն է Քրիստոնեայ հաւատացեալին համար:

Դ. — Ի՞նչպէս կրնանք տրանալ այս բարի խղճմտանքին: — Բարի խղճմտանքի տիրանալու համար բարի Քրիստոնեալի մը կեանքը ապրիլ անհրաժեշտ է: Երբայցւոց թուղթին հեղինակը կ'ըսէ: «Քրիստոսի արիւնը, որ յափենական նոզիին ներփով իր անձը անարա պատրազ մատոյց Ասուծոյ, պիտի սրբ ծեր խօսքին նոզիին ներփով իր անձը անհրաժեշտ է: Ասուծոյ պատելու համար»:

Երբ Պօղոս առաքեալ երուսաղէմի մէջ զինքը ամբաստանող քահանաներու և հըրեաներու բազմութեանը առջև հազարապետին հրամանաւ խօսելու արտօնութեցաւ: Իր խօսքը սկսաւ այսպէս: «Մարդիկ եղբայրներ, ես բոլորովին բարի խղճմտանենով կեանք վաերե եմ Ասուծոյ առջեւ մինչեւ այսօր» (Քործք, Ի. Գ. 1): Ապա երբ Պաղեստինի կեսարիա քաղաքը զրկուեցաւ, հոն՝ Փելիքս կուսակալին առջև ալ նոյն ձեռով արտայայտուեցաւ: «Ես այս բանին համար կը զանամ, որ ամեն ատեն բարի խղճմտանք ունենամ Ասուծոյ եւ մարդոց առջեւ» (Քործք, Ի. Գ. 16):

Քրիստոնէութեան մէծ առաքեալին այս վկայութիւնը ցոյց կու տայ թէ ինք բարի խղճմտանքի տիրացած մէկն էր: Արովհետե Քրիստոնէական բարի կեանք մը ունէր, անոր համար որ Դամասկոսի ճամրուն վրայ դարձի գալէն յետոյ Քրիստոսի թանկագին արիւնը սրբած էր իր խղճմտանքը իր զործած մեղքերէն և զինքը զրած էր առտուածպաշտութեան շիտակ ճամրուն մէջ: Ուրիշ խօսքով, Աստուծոյ եկեղեցին հաւածող նախկին մեղաւոր Սողոսը Յիսուս Քրիստոսի միջոցաւ սրտի նորոգութիւն ունեցող Պօղոս առաքեալի փոխուած էր: Երբ սիրաը կը նորոգուի, միաժամանակ կը նորոգուի նաև մարգուն խղճմտանքը:

Կը պատմուի թէ մարդ մը մատանի մը ունէր, որուն մէջ ասեղ մը կար որ զինքը կը խայթէր ամէն անզամ որ սիսուլ արտարքի մը մէջ գտնուէր: Օր մը, ճանձրացած ըլլալով այս խայթերէն, մատանին հանեց և անոր ասեղը կոտրեց: Յետոյ սկսաւ ազատ համարձակ իր ուզած մեղքերը զործել, առանց որևէ ցաւ զգալու:

Աշխարհի վրայ այսօր որքա՛ն մարդի կան՝ օրոնք քրիստոնեայ անունի ներքէ հեթանոսական մեղսալից կեանք մը կ'ապ թին և բնաւ չեն զգացութիր ու չեն զգաստանար: Արովհետե իրենց խղճին փափուծայնը շարունակ լուեցնելով և միշտ անզոսնելով, բոլորովին թմբեցուցած են զայն ու այլես նող ճահարութիւն չեն զգար: Բայց Աստուծոյ խօսքը կարող է այս թմբած խղճմտանքները արթնցնել, եթէ իրենք դարձի զան, ապաշխարեն և անկեզծ զըզնուով մը Յիսուս Քրիստոսի յանձնութին որպէսզի Ան իր արքիւնովը սրբէ զանոնք: Ահա այն ատեն կ'ունենան բարի խղճմտանք և աստուածահաճոյ բարի կեանք:

Դաւիթ երբ Տասնաբանեայի 6րդ և 10րդ պատուիրանքներուն զէմ մէկ անդամէն մեղանչեց և Աստուծոյ առջև սոսկալի ու ծանր մեղքի մը մէջ ինկաւ, Նաթան մարդուի առաջնորդութեամբ զգաց իր զործած մեղքին ահաւորութիւնը ու խղճահարուեցաւ, և ուստի 50րդ (աշխարհաբարի մէջ 51րդ) սաղմասը արտասանելով ապաշխարեց, որուն հետեանքով վերստացաւ Աստուծմէ իր խղճի հանգստութիւնը, մտքի անդորրութիւնն ու սրտի խաղաղութիւնը:

Պետրոս երբ երեք անդամ իր Տէրը ուրացաւ, անմիջապէս խղճի խայթ ունեցաւ, և զուրս ելլելով լուցաւ դառնապէս: ապա Տիրոջ թողութեան արժանանալով տիրացաւ իր խղճմտանքի նախկին խաղաղութիւնը:

Պետրոսի նման մինչև հիմա որքա՛ն մեղաւորներ խղճահարութիւն ունենալով իրենց զործած մեղքին համար Քրիստոսի խաչին պատուանդանին առջև խոնարհելով Անոր թանկացին արեան միջոցաւ սրբուած ու ազատագրուած են իրենց մեղքերէն և վերստացած են իրենց բարի խղճմտանքը:

Կեանքի մէջ ամենէն ծանր բանը մեղանչելով յանցաւոր խղճմտանք կրելն է: Պօղոս առաքեալ սորկաւագներու յատկանիները թուելու ատեն, ի միջի այսոց կ'ըսէ: «Հապա հաւատքի խորհուրդը պահեն մակուր խղճմտանենով» (Ա. Տիր., Պ. 9): Քրիստոնէական կրօնի հաւատքի խորհուրդը մաքուր խղճմտանքով պահել ոչ միայն սորկաւագներու կամ եկեղեցականներու համար կարենոր է, այլ նաև անհրաժեշտ է բոլոր քրիստոնէաներուն համար: Քանզի քրիստոնէական բարձր կեանքը հաւատքով ու մաքուր խղճմտանքով միայն կարելի է ապրիլ:

Ֆեկիօ, Գալիթ.

ԴՐ. Ա. ԱԱԲԱՋԵԱՆ

ՍՏԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԸ

•

Այլ եղիցի ձեր բան, արև այս,
եւ ոչն ոչ։ (ՍԱՍԹ. Ե. 37):

Բոլոր մեղքերուն մէջ ամենէն աննշան նկատուած՝ բայց նոյն առեն զրիթէ ամենէն առելի ընդհանրացածն է ստախօսութեան մեղքը։

Եթէ փնտաելու ըլլանք պատճառները այս իրազութեան, պիտի գտնենք թէ մէկէ առելի են անոնք։ Նախ՝ ստախօսութիւնը ըլլալով մեղք մը՝ որմէ ուրիշներ ընդհանրացէն նուռազագոյն չափով կը վնասուին և երբեմ բնաւ իսկ չեն կրեր վնաս, շատ առելի համարձակօրէն կը կատարուի մարդոց կողմէ, քան, օրինակ, մարդասպանութիւնն ու զողութիւնը, որոնք այլազան պատիժներով ու մինչեւ իսկ մահուամբ կը հատուցուին պիտական իշխանութեանց կողմէ։ Յետոյ, ստախօսութիւնը աննշան ու մինչեւ իսկ անխօսափելի նկատուող մեղք մը ըլլալուն, նուռազ խրաչեցուցած է Աստուծոյ լոյսին բացուել ուզող հոգիներն իսկ՝ քոն, օրինակ, վերոյիշեալ երկու մեղքերը։ Սակայն պէտք չէ մռնալ թէ մեղքերուն մեծը կամ փոքրը չկայ, և թէ օր մը պարտաւոր պիտի ըլլանք հաշիւ տալու մեր բոլոր մեղքերուն կամ թերացումներուն համար, եթէ անկեղծօրէն չզղջանք ու չապաշխարհնք։ Ի վերջոյ, մեղքին վարձքը մահ է Ա. Գրական հաստատումը ի զօրու և բոլոր մեղքերուն ալ համար։

Աւ նաև նկատի պէտք է առնել թէ քիչ են պարագաներ՝ ուր մենք կը փորձուինք ոճրագործութեան և կամ այլ ծանրակշիռ հետեւնքներ ունեցող յանցանքի մէջ իշնալ։ Մինչդեռ զրիթէ ամէն օր առիթներ կը ներկայանան մեղի ստախօսութեան մեղքը գործելու։ Աւ եթէ շատ յանախ քաջութեան պակասը բարերար զեր կը կատարէ առաջիններու պարագային, մեղ ետ կեցնելով մեղանչելէ (թէ մեղքը, յդացուած բռնէէն, մռած ումէն զործազրութեան չանցած իսկ չի գաղրիք մեղք մը ըլլալէ), երկրորդ պարագային՝ նոյն այդ քաջութեան պակասն է օր մեղ կը մղէ ստախօսութեան։

Ստախօսութեան մեր կեանքին մէջ գրաւող լայն տեղին պատճառաներէն մին է նաև այն՝ որ այդ մեղքը ընդհանրապէս կ'ընկերանայ և կամ հետեւանքն է ուրիշ, աւելի ծանրակշիռ մեղքերու։ Գողութեան յանցանքի մէջ բանուող մը, օրինակ, իր օճիքը պատահելու համար, իրրե սահին միտինց մը զողցած ձևույթին։ Յանախ նաև սուտին կը զիմենք փրկելու համար մեղի յաջողութիւններ՝ այս կեանքին համար։ Եւ սակայն պէտք չէ մռահան ընել թէ սուտով ու կեղծիքով ձեռք բերուած յաջողութիւնն ու անկէ յառաջացած երջանկութիւնը չեն կրնար կատարեալ ըլլալ ու լուզին զոհացնել մեր խզ ձմռանքը։ Այդպիսի յաջողութիւններ ոչ միայն անկայուն ու անցողական բնոյթ կը կրնե, այլև նման են Աւետարանի մէջ յիշուած այն տան՝ որուն հիմերը խախուտ էին աւագի վրայ հաստատուած ըլլալուն, և որ առաջին փոթորիկէն իսկ կրնայ փուլ զար ու կործանիլ։

Ամէն անոնք՝ որոնք չունին ձշմարտութեան գիտակցութիւնն ու սէրը կ'ապաւինին սուտին ու կեղծիքին։ Վասնզի ճշմարտութիւնը խօսելով իրենց անօրէն զործերը պիտի հրապարակուին։ Ճիշդ ինչպէս անոնք՝ օրոնց զործերը չար են պիտի չուզեն լոյսին զալ ու պիտի սիրեն խաւարը, նոյնպէս և այդպիսիներ հեռու պիտի կենան ճշմարտութիւնն։ Արովհետեւ ճշմարտութիւնը լոյսին մէջ կը բնակի միայն, ու խաւարը հոմանիշն է սուտին ու կեղծին։ Արդարը պէտք չունի զիմելու այդպիսի անուղիղ միջոցներու, վասնզի անիկա իր զործերէն ամենալու որեէ պատճառ մը չունի։ Բնդհակառակն, ճշմարտութիւնը ծածկելով ուրիշ յանցանք մը զործած կ'ըլլայ։ Աւ երբ մեղի կը պակսի քաջութիւննը խօստովանելու քրիստոնէական կրօնի ճըշմարտութիւնները, թերացած ու պարտազանց զանուած կ'ըլլանք աստուած ային

օրէնքին հանդէպ, ճշմարտութեան լոյսը
պրուտնի տակո թաքցուցած ըլլալով:

Քրիստոնէութիւնը ի՞նչպէս պիտի ծաւ-
լալէր եթէ երբեք առաքեալներ անվեհներ
շխոստովանէին Քրիստոսի աշխարհ բիրած
ճշմարտութիւնները, ու հալած անքնիրէ ու
նեղութիւններէ վախնալով՝ ջանային սու-
տով մը ուրանալ զԱյն, փրկելու համար
իրենց ճղճիս անձերը, առաւել կարեսու-
թիւն ընծայելով անոնց՝ իրենց զաղափա-
րականէն, իրենց վսիմ իտէալէն:

Ստախոսութիւնը, ուրեմն, հետեանք է
նաև վախկոտութեան ու անհամարժակու-
թեան: Ու վախկոտութիւնը հետեանք է
թերառուտառութեան: Ճշմարիտ քրիստոն-
եան կեանքի ամէն երեսոյթներուն առջն
անդհատ է ու պատճառ մը չունի վախնա-
լու աշխարհիկ ուժերէն ու թշնամիններէն,
վասնզի ան քաջ զիտէ իր ընկելիքն ու ըլ-
լալիքը, ու երբեք չի մօսնար Քրիստոսի
պատգամը. ալլի՛ զարհուրիք յայնցանէ որք
սպանանեն զմարմին, և յետ այնորիկ առ-
ելի՛ ինչ ոչ ունիցին առնելու: Անոնք վախ-
նալ զիտեն միւայն այն բոլոր ուժերէն՝ ու-
րոնք զանազան կերպարանքներու տակ կը
ներկայանան իրենց, առաջնորդելու համար
յաւիտենական կորստեան, հոգեկան մահ-
ուան: Անոնք զիտեն ճշմարտութեամբ յազ-
միլ այս վերջիններուն յերիւրած ուտե-
րուն ու կեզծիքներուն, ու ճշմարտու-
թեան լոյսով ցրել անոնց յոտաջացուցած
խաւարը:

Նիւթական աշխարհի մէջ չատ մը իրեր
կան, որոնք հակառակ իրենց փոքր ծաւա-
լին քանզիչ ուժեր կը պարունակին և որով
ժարդկային կեանքին մէջ մեծամեծ աւելր-
ներ կրնան զործել: Նոյնն է նաև ստախո-
սութեան մեջքը՝ հոգեկան աշխարհին հա-
մար: Անհշան ու թեթե նկատուած այդ
յանցանքը ինչքա՞ն զժբախտութիւններու
պատճառ կը գառնայ յաճախ: Արքան
անմեղներ դատապարտուած են օրէնքէն,
ուրիշներու կողմէ ուտե վկայութիւն տըր-
ուած ըլլալով իրենց մասին: Հրեաներ Պի-
գատոսի առջն նոյն մեղքը գործեցին,
ուտե վկայութիւն տալով Աստուածարդուցին
ժաման, ու վերագրելով Անոր յանցանքներ՝
որոնք երբեք հաշտ չէին կրնար ըլլալ իր
աստուածային բնութեան հետ:

Հին Աւխտի մէջ, Եհովա, Տասնարա-
եայ պատուիրաններով, ի միջի ոլլոց կը
պատգամէ Տիրոջ անունով ուուա երգում
չընել և ուրիշին հանդէպ ուուա վկայու-
թիւն չտալ: Իսկ նոր Աւխտի մէջ, Յիսուս,
քայլ մը աւելի առաջ երթալով, կը յայ-
տարարէ. ԱԱմեններն մի՛ երդուուլ . . . այ-
եղիցի ձեր բան, այսո՞ւ այս և ոչն ոչ:
Վասնզի այզպէսով է միայն որ մարդիկ
փոխադարձ ու բացարձակ զոտահութեամբ
ու սիրով պիտի լեցուին իրարու հանդէպ,
ու պիտի նահանջին թշնամութիւններն ու
զանազան մոլութիւնները՝ որոնք կը հաս-
նին երբեմն մինչև մատնութիւն, զաւաճա-
նութիւն և արիւնայի ընդհարումներ:

Խոստովանիլ մեր կատարած մութ զոր-
ծերը, հրապարակել մեր զործած յանցանք-
ները լրիւ կերպով, բանալ մեր սրտին ծար-
քերն ու մտքին չար ու սև խորհուրդները
անկեղծօրէն ուրիշներու առջև, երբ առիթը
ներկայանայ կամ հարկը պահանջէ, զիւ-
րին չէ յաճախ կարծուածին չտփ ու կը
պահանջէ հոգեկան արիւնթիւն ու պայծառ
հաւատք: Վասնզի զագանիքներ կան՝ ու-
րոնց հրապարակումը արգիլելու համար
պատրաստ ենք երբեմն մեր կեանքն իոկ
վրայ տալու: Ու շատ յաճախ ինքնարերա-
րար կը խօսինք սուտեր՝ զուրո զալու հա-
մար մենք մեզի պարտադրած անել կա-
ցութենէն:

Բայց ճշմարիտ քրիստոնեային պարտա-
կանութիւնն է պայքարիլ ամէն տեսակի
սուտերու ու կեղծիքներու զէմ: Իրեն այդ-
պիսիներ, պարտինք ի մի խմբել ու զօրա-
կոչի ենթարկել մեր բոլոր հոգեկան ուժերը:
անոնցմազ զինուած ու զօրացած զիմազրա-
ւելու ամէն կարգի փորձութիւններու ու
մեղքերու, որոնք ինչպէս անցեալին ջա-
նացած են՝ այնպէս ալ այսօր կը ջանան
մարգկային հոգին առնել իրենց միանհեծան
տիրապետութեան, իրենց ընկճող ու ճնշէ
թագերուն ներքեւ:

Գլուխ Ա. Ճինիվիջելլն



ՄԵԼՎԻ ՇՈՒԺԱՆՆԵՐՔՆ

ՆԵՂՈՍԻ ԼՈՒՏԱՍԸ

Մեղքի ոսանէն դէպի արեւմուտ,
Ուր մեծ անապատն,
Առիւծի հրակայ մորթի մը նըւան
Կը բացուէր խաղաղ,
Հին մեհեանի մը աւերեւուն բով,
Կոյսերու յատուկ մենասան մը կար:

Խորն անապատին,
Հեռու մարդերու կայֆէն հեշտաէս,
Բազմաքիւ խուցեր կային կոյսերու,
Կանգնած բովէ բով,
Նինուած եղեգէ ու ծեփուած կաւով:

Ոմանի Մարքաներ կը կոչուէին հոն,
Տընտեսուհիներ հոծ կարիքներու,
Հազած բրձանիւս դեղին պարեզօս:
Մազդաղինէներ, ըսպիտակազգես,
Կը պարապէին աղօրքի, խոկման
Ըզմայանքներով:

Կ'ապրէին անոնի,
Ծումով, աղօրքով հանապազօրեալ,
Իրենց կը սրուէր երեմքն տեսնէլ,
Ամպերու մէջէն, զըրախտն ու Ասուած,
Ու կը գողպըրդար խորն իրենց հոգւոյն,
Թեւն անձանօրին փայլակնատեսիլ:

Յանախ կիրեւու խայրոցներուն դէմ,
Կը խուսանզէին մարմիններն իրենց,
Հաւատալով թէ վէրեւն արիւնոս,
Վարդեր էին վառ, կարմիր ու կապոյս,
Նըման տեսիլին մեծ մարզարէին,
— Թէ անապատներն պիտի ծաղկէին,
Կուսութեամբ մահուր:

Ո.մէն առաւօս, երբ աղօրքէն վերջ,
Սափորներ ուսած կ'երբային աղբիւր,
Աւազին վըրայ կը նըւմարէին
Հետքեր նիշտակի.

Ո.նոնց առընթեր, սոսկումներով մուր,
Ունաղըրումներ ոզիներու չար,
Զի անապատն այն ռազմավայր էր մեծ,
Ռւմերու անքին, իրարու ներհակ:

*

Մօյիկ ոստանէն,
Օր մը մենաստան բերին յանձնելու,
Աղջընակ մ'աղուոր,
Նուշան մը ինչպէս, սարիմին շաղովլ:

Մեծ ապաստինին,
Նայեցաւ սրտում մազերու խուրձին,
Խոյակ առ խոյակ ուսերուն փրուոած,
Այսեր՝ բըրբուացող երկնային նըսխար,
Աչըներն հոսուն երակներ չուրի:

Կապելով պրասակն անոր նակտին շուրջ,
Մախուր կուսուրիան,
Մեծ ապաստինին, «Նեղոսի լուսա»
Ս.նուանեց աղջիկն այդ չըմսաղազեղ,
Օր կը կարմըրէր, վարդի մը նըման,
Ի լուր տիտղոսին իրեն ընծայուած:

*

Ս.նցան սարիներ,
Ա.րեւէն հալած խորխախի հանգոյն,
Կարեցան իրմէ յոյզերն իր բոլոր,
Սիրտն իր խընկաման, աղօրքի, խոկման:

Բայց ո՞վ է կըրցեր քաղել անարգել,
Ծաղիկը սըրտին սառույցին ներենի:
Ա.ռանց պատիժի չի քափիր ոսկին
Հողերու ցեխին,
Զի մարիր կըրակն մեր արիններուն:

Ի զո՞ւր կը ջանար կոյսն աստուածաւեալ,
Եր հոգին փոխ տալ աւազներուն չօր,
Օր բըռնել կ'ուզէր կապոյն լուսընկան,
Մանկան մը նըման,
Զուրերու ծոցին՝ լուռ դողդըրացող:

Օրէ օր իր մէջ կ'անէր կը մեծնար,
 Հեռաւոր սրդուն կարօն անանուն,
 Պատկեր մը ինչպէս, բովիչ, բրբրուն,
 Պատառին վրայ անցեալին անմեռ:
 Ու ամէն վայրկեան, բաղրութեամբ անհուն,
 Խորն իր նոզիին, լոյսի մը հանգոյն,
 Կը բացուէր աղուոր դէմքն այդ պարմանին,
 Որ նեռուներէն կը նայէր իրեն,
 Երբ ինք կ'աղօթէր եւ կամ կը խոկար:

Մեղմիկ ըրբինով,
 Կարծես միջոցին մէջ պարաձըզուած,
 Ան իրեն կու զար,
 Երեմն ալ կարծես նըպելով իրեն,
 Մասներով կըրակ:

Երբ ետին դառնար կարծես նոն էր ան,
 Երբ նայէր նեռուն,
 Երազ մը ինչպէս ինքզինքը նիւսող,
 Մըշուշին ծոցէն կը բըխէր սըզան,
 Յահախ բախծագին, Երբեմն խընդափայլ:

Ցերեկ ու գիւեր, մէջն իր նոզիին,
 Կը պատկերուէին տեսիլներ հազար,
 Աւելի ուժգին, աւելի իրաւ,
 Քան նըւմարտութեան դէմքն ամէնօրեայ:

Ու ձայնն որ կ'ըսէր, բառերով կըրակ,
 Բըզզիսէ մարմինդ, ցամեցուր արիւնդ,
 Փըշէ ոսկորներդ,
 Նորէն չես կըրնար
 Խըլել յիշատակն անցեալին կախարդ:

• • • • •
 Երիկնամուտին՝
 Նըզարէն արեւուն հորիզոնին դէմ
 Կը ձըզուէր խաղաղ,
 Անապատն ամբողջ ովկիան էր ոսկի,
 Եւ ամպեր ակա:

Նարժումով մ'յանկարծ, լոյծ, եթերային,
 Երկինք, անտպատ կը դատարկուէին,

Երերէն բոլոր,
Ամպերու նըման հովերէն քրուռող:
Երեն կը բուէր թէ սրդան նորէն
Եր ժոլին էր կեցած,
Նըրբներուն՝ մըպիս, աչերուն՝ կըրակ:

Կիյնար իր ձեռքէն կուժն լեցուն ջուրով,
Կոյսն յուզումնահար,
Եր շարժումներուն այլեւս անզիտակ,
Դէսի նեղոս զես կը վազէր արագ,
Անձանօր ուժէ մը դեկալարուած,
Լըբած մենաստան և անցեալն ամբողչ:

* * *

Երիկնամուս էր,
Սրմաւենիներ լուն կ'օրօրուիին
Ասդերու մօսիկի,
Երկինն անսահման վրան մը շինչպէս,
Աւազներուն դէմ կը բացուէր խաղաղ:
Նայեցաւ ետին փախչող աղջիկն այն,
Ու տեսաւ նեռուէն,
Ու մենաստանին վրայ էր ծարեր,
Անապատներու աղուոր լուսընկան:

ԵՊԻՎ. ԱՐԴ

... ԳՈՎՔԸ ԵՎ ԽՎՉՈՒՄ ԶԼԱԵՄ ԵՍ

(Ներգոյքի սրառուչ կոչին առքիւ)

Հայրենիքս սփռուող կանչին հանդէպ նոզեհմայ,
Պանդուխս հայու իմ նոզին, ըսէ՛ֆ, ի՞նչպէս դիմանայ,
Հրաւէրին՝ մեր երկրէն, որ օր առու կը շենայ,
Ըսէ՛, ընկեր, ի՞նչպէս լու ու անարքեր ան մնայ:

Յու վերելքով, Հայրենիք, աննախքնքաց.՝ կորովի,
Աժամտունակ, հանճարեղ, հաւատաւոր, ժպտաչուի
Զաւակներով նիզերով մեր երկներին շակ ծափի,
Կարօսակեղ իմ նոզին, ըսէ՛ֆ, ի՞նչպէս չիրնուի:

Վերերը բի՛ւր անցեալիդ ա՛լ կը մոռնամ եւ այսօր,
Երբ հպարտանի լոկ կրնայ առքել ինձի կեանքրդ նոր,
Երբ սաւ ծոցիդ կը կանչես բու զաւակնեղ հեռաւոր,
Նմդենի ցուպը նետած՝ որ ապրին կեանի մը անդորր:

Ի՞նչպէս նոզիս չիրնուի, ի՞նչպէս չըլլամ ես արքչին,
Դորովալից շետով երբ նեզ կը կանչես, Մայր-Երկիր,
Օտարութեան մէջ հիւծող զաւակներըդ տարագիր.
Դարերէ վերջ մուր, դժնէ, այս ի՞նչ պայծառ հակտի զիր:

Ս.պազայիդ հանդէպալ ի՞նչպէս չըլլամ լաւատես,
Ա՛յլ Հայրենիք ուռնացող, գովըրդ ի՞նչպէս չընեմ ես,
Աւ երբ դուներդ կը բանաս ու մեզ ես՝ տուն կը կանչես,
Քեզմէ նեռու ապրելուն նես հաւըսիմ ա՛լ ի՞նչպէս:

1961

Գ. ՃՈՐՏՈՐ



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՃԱՌ Ի Ս. ՎԿԱՅԱՆ ՔՐԻՍՏՈՒ

ՅՈՀԱՆՆՈԲ ՄԱՆԴԱԿԱՆՆԵԽՈՅ

Յովհան Մանդակունիի անունով խորագրուած այս ձառը կը գտնուի Ա. Աթոռոյս թիւ 3152 ձառընտիրին մէջ (էջ 406-8), որ երբեմ կը պատկանէր Անթէպի Ա. Առաջուածածին եկեղեցին: Ընդօրինակուած է 1384ին Կաֆայի մէջ: Դրիմ: Յիշեալ ձառը կը կրէ գրչին ի՞մ համարութիւը, որուն նաև խորգոզ ի՞մ զլուխը խորագրուած է, «Հրուտից ամսոյ և վկայարանութիւն» Արքոց վարդանանցն և այլոց նախարարացն և զւրացն Հայոց որք ի Քրիստոս կատարեցան»: առնուած Եղիշէ պատմիչէն (Ե. և Զ. Եղանակներ): Այս պարագան հիմ կու առյ ենթադրելու թէ Մանդակունիի ճառին ակնարկած վկաները վարդանանց նահատակներն են:

Արդ երանելի որբոց նահատակացն Քրիստոսի՝ պատգամօք կենուատուին քաջալերեալք զւրացան, և պատուիրանութիւնը պատուականին հաստատեալք՝ կատարեցան ինքնակամ կամաւք:

Մտին ի մրցանակն ընտրուզութեան, և պատուական մահուամբ հասին ի կեանս բնական կենացն:

Արողական կամաւք արդարացան, և ցնծալից ուրախութեամբ միսեցան ի զառ երկնացին հրեշտակացն:

Մտեալ մտաւք մտին ի զործ տէրունական տարագուն, և կենուարե մահուամբ վճարեցին զհանգէս նահատակութեան:

Կամողական կամաւք հաւանեցուցեալ զանձինս իջանել ի հանդիսաբան ընտրուզութեան՝ զէտակն ունելով կենացն ընտկանաց:

Պար առեալ ճախրեցին ցնծալից ուրախութեամբ, քանզի տեսչութիւն միասնական Երրարդութեանն մատակարարէ նոցալինել որդիս աջակողմեանն:

Յաջողակ ընթացիւք հասեալ ժամանեցին ի կեանս էտկան կենացն, յորում է հանգիստ լի ցնծութեամբ և ուրախութեամբ:

Հաւատագք դէմ եղեալ յորդորէին զանձինս անցեալք ի հանդիսի նահատակութեան՝ առ ի ժառանգելոյ զբնական կեանս անմահու շնորհօք տըւչին:

Առեալ հայեցան յաւրէնս արդարութեան, և աւրինարարութիւն քրտամբք մղեցին զւրենու մահարերու մեղացն, և անցաղար աղաթիթիւք լուծին զթոյնս խանձական ժահուն:

Համբերութեամբ մղեցին զպատերազմ, և երկայնմտութեամբ հասին իրին, ուշ եղեալ՝ ակն ունելով կենացն յաւրիտենականաց: Կենացք զիեանս շահեցան, և մահուամբ գարքայութիւնն ժառանգեցին:

Տանջանաւք զտանջանս ժաշեցին, և մահուամբ զմահ անարգեցին:

Տանջանաւք շահեցան զիեանս, և մահուամբ զնեցին զարքայութիւնն:

Արդեամբք զարդարութիւնն շահեցան, և մահուամբ զարքայութիւնն ըմբռնեցին:

Արդեամբք արդարութեան անցին ի հանձիսի նահատակութեան, և իրաւամբք արդարութեան ժառանգեցին զարքայութիւնն:

Ենչեաց ի նոսա հօգի շնորհաց, քաջաւերել զնոսա ի պատերազմի նահատակութեան:

Քաջասիրտք զւրացեալք յորդորեցին ի հանձիսի նահատակութեան, զի զերկնացին բարութեանցն զբարութիւնն հաւատակաւու ժամանակակայու և զգուզնաքեայ կենացու:

Հաւատարիմ սրբիւ և մտերիմ մտաւք ընկեցին զինքեանս ի մրցանակն ընտրուզութեան, անարգելով զվայելչութիւն զառմամանակայու և զգուզնաքեայ կենացու:

Պարեալ մտաւցին արարչին իւրեանց զախսատութիւն չարչարանացն զերկրային տանջանացու, առ ի ժառանգելոյ զերկրային բարութեանցն զերանութիւնն:

Թեթեամթուիչք և երազահաս ժամանեցին ի կայանս բնական կենացն, կարեալք համբերիցին կարեաց, և տանջանաւք վճարեցին ի տանջանաց:

Տանջանաւք շահեցան զիեանսութիւնն և մահուամբ զնեցին զարքայութիւնն:

Տանջեցան զան արդարութեան, և մեռն զան արքայութեան:

Մահուամբ մարմեոյ զնեցին զանմահութիւնն, և կենդանութեամբ հօգւոյ ժառանգեցին զանանց կեանս:

Մահուամբ մարմնոյ կարեցին զկրճիմն ժահարեր մեղացն, և կենդանութեամբ հոգոյ ժառանգեցին զերանութիւնու:

Մարմնով մեռան յերկրի, և հոգով կենդանացան յերկինու:

Տանջանուք մարմնոյ զնեցին զկինդաշութիւն, և մահուամբ անձանց ժառանգեցին զարութիւն:

Մահուամբ մարմնոյ սպանին զմեզս մարդուացան, և կենդանութեամբ հոգոյ իւրեանց զարդարեցին զիշտատակու:

Մահուամբ մարմնոյ չնչեցին յանձանց զկտակին անուրէնութեան, և կենդանութեամբ հոգոյ իւրեանց զրեցին զանձինս իւրեանց ի զպութիւն կենաց:

Մահուամբ մարմնոյ հասին անցին ընդ համատարած ծովի ամենամեղ կենաց, և կենդանութեամբ հոգոյն հասին ի նաւաշանդիւսն խոզագութեան:

Ցեական համբերութեամբ մեռան մեղացն, և մաերմական սիրով կենդանացան արդարութեան:

Մահուգեցեց տանջանուք թաղեցան ընդ երեակո, և լուսուգարդ փառաւք թռեան ընդ տուաւուսու:

Պատեցին զանձինս մահուամբ մարմնոյ, և յուրինեալ զարդարեցին զանձինս ամենասուրը հոգույն, և սպանին զմեզս մահարեր սպանմամբ անձանց իւրեանց, և կենդանացուցին զկեանս կենարեր հոգույն իւրեանց:

Տանջանուք մարմնոյ տանջեցին զման, և կենդանութեամբ հոգոյ ժառանգեցին զարքայութիւն, քանզի սիրեցողացն Քրիստոսի՝ կեանք մարմնոյ արհամարհեալ են, և մահ ընթագրեալ:

Աչ ոք զտանէ զկեանս՝ եթէ ոչ նախ մեռանիցի զտան կենաց:

Աչ ոք զրակի տոէ, եթէ ոչ լուս աւրինցն մարտիցէ:

Դիսութեամբ հոգույն քննե[ցի]ն զառաջակայ կենացն զկայանս, և աշխատութեամբ մարմնոյ հասին կենացն բնականաց յորում է հանգիստ լի խոզագութեամբ:

Առանդ անարդեցին զանցական զցանկունու պատրազականս, զտանզի ցնձաւից յուսով էին հասանակեալք ի պատերազ ի նահատակութեան, այնոր ազագաւ զկրիս մարմնոյ իրրե զոչինչ համարէին:

Քանզի անձամբ անձանց զանձեցին զանձանութիւն:

Ճգնազգեաց աշխատութեամբ ճնշեցին զանձինս իւրեանց, և արիւնաշինք արամբք՝ մարտեան ընդ մեղս մահարերս. վասն այսորիկ ինքնարեաց լինէր նոցա դուռն երկնային զարութեանցն:

Արդ՝ ամենամեծ ար գովութեամբ բուրեցին զանուշանութիւն ազնուականութեան սիրոյն իւրեանց, վասնզի զմիտս իւրեանց յերկինս ուղղեցին, ել և ել առանէին վաղահասուկ լինել ի կայանս բնական կենացն:

Հաւատովք տեսին, յուսով ընթացան, սիրով հասին: Հաւատով նուիրեցան, յուսով ընթացան, սիրով պատարագեցին: Հաւատով մխեցան, յուսով տանջեցան, սիրով վճարեցան: Հաւատով հաստատեցան, յուսով փորձեցան, սիրով կատարեցան:

Տիսին և սիրեցին. ցանկացան և հասին. մեռան և պսակեցան: Արդեամբք արդարացան, իրաւամբք փառաւորեցան, և մահուամբ պսակեցան: Անարգեցան և պատուականացան, տանջեցան և մեծարեցան: Իմաստութեամբ ընթացան, զիտութեամբ հասին, համբերութեամբ ժառանգեցին:

Լցին զկափսակ մտաց իւրեանց իւղովն արդարութեան, և լուսուուրեցին զկանթեղ ոգւց իւրեանց չնորհաւք Հոգույն Արքոյ, և զարդարեցին զպսակս զլիսց իւրեանց մահուամբ անձանց իւրեանց:

Աւրհութեամբն Աստուծոյ, և զաւրութեամբ Արգույն միածնի, և յաջողութեամբ Հոգույն Արքոյ, արարին զանձինս իւրեանց որգեզիբս արդարութեան, և մասանգորդ աջոյ կողմանն:

Փառք նոցա յերկինս, և յիշտատակք նոցա ի բերանս ամենայն բարեպաշտաց, քանզի արժանի յիշտատակաց ընթացան. տուեալ զկեանս առամարդյն ասին զկեանս առյապայն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ուրուք փառք յաւրահանս ամէն:

Ն. ԵՊԱ. ԾՈՎՈՒԿՈՒՆ,



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԴԵՐ

ԿԵԶԱՌՈՒԻՔ

ՏԵՂԱԿՐՈՒԿԱՆ. — Կեչառոք վանքը կը պահուի. Այլքարտածեան նախազի վարժանակը զաւարի զաւարին մէջ, կեչառոք (= Ծաղկաձոր) զի զին մատ երեսնէն 57 քիլոմետր գէպի հիւսիս-արևելք. Անձեռ չօրո եկեղեցիներ. Ա. Գրիգոր Լուսուարիչ. Ա. Եշան, Ա. Կաթողիկէ և Ա. Յարութիւն. — Եղիսաբերան. Էջմիածին. 1955 Մեկու. էջ 50, 54:

ԳԱՍԻՐԱԿԱՆ. — Վանքը պատմութեան մէջ կ'երեւ մէկ զարու սկիզբը և առելի կամ նուազ փայտով կը անենուի մինչև մէկ զարու կէսը. Վանահայրերէն կործոր թիւ մը յիշուած է արձանազրութեանց մէջ:

Գրիգոր Մազիստրոս. որդի Հասանայ, 1003 թույն կը կառուցանե. Ա. Գրիգոր եկեղեցին. — Եղիսաբերան. Էջմիածին. 1955 Մեկու. էջ 51. Գեկու. էջ 38:

1. — Բարսիլ Գանիմիոյ, 1051. — Այդ թուականով յիշատակարան մը ունի Գրիգոր Մազիստրոս (որդի Վանակայ). Վասուարականի և Տարօնի Դուռքը. և յարուի մատենազիր. Կեչառոք եկեղեցիները մեծ աշխատաթեամբ ազատեան սոսթիւ. — Էջմիածին. 1955 Մեկու. 39. Յագսւարեան. Խաղբականք, Բ., Երևանզէմ. 1041, էջ 3-4:

2. — Պետրոս Վանիմիոյ, 1161-+1184. — Եսրուած և պայծառացուած է Վանքը. — Հայուպատում, էջ 399. Խաղբականք, Բ., 10-12:

3. — Խաչուսուր Վանիմիոյ, չ. 1185. — Ինքը և միաբան եղբայրները վերստին նորոգած են Ա. Գրիգոր Եկեղեցին. — Էջմիածին. 1955 Մեկու. 39. Խաղբականք, Բ., 13:

4. — Համազապալ Առաջնորդ, չ. 1200. — Էջմիածին. 1955 Մեկու. 44. Խաղբականք, Բ., 14, 15:

5. — Գրիգոր Վրդ. Առնինիլ, 1206-1223? — Մասնակցած է Հօսիր և Ամբի ժողովներան. Զաքարիա սպասուարի մատանակ.

6. — Օրոս, 1214ին. Վասակ իշխան. որդի Խաղբակի. կը կառուցանե. Ա. Կաթողիկէ եկեղեցին:

7. — Մարի ետքը, 1220 թույն. կը շնուրի Ա. Յարութիւն Եկեղեցին:

8. — Երեք մարի ետքն ալ. 1223ին. Պատրիարք կը նորոգէ. Ա. Եշան Եկեղեցին:

9. — Կրտսեան կը բարեկան. էջ 84-6. Խաղբականք, Բ., 15-22. Գ., 35 (50). Էջմիածին. 1955 Գեկու. 42 (18), 44 (32, 33), 45 (37, 38):

10. — Անրու Վարդապետ, 1223? — Կրտսեան. էջ 86. Էջմիածին. 1955 Գեկու. 41:

11. — Միխար Վարդապետ, 1242?—1252? — Զարու Հասան. որդի Վասիլան զայ. և իր ամուսինը՝ Մամքան. 1248ին վերստին կը նորոգէն Թաթարներու կողմէ տերուած Վանքը. — Էջմիածին. 1955 Գեկու. 40, 48. Խաղբականք, Բ., 22-24:

12. — Թագիկ Վարդապետ, 1262. — Էջմիածին. 1955 Գեկու. 42:

13. — Արմեն Առաջնորդ, 1272. — Եսրու. էջ 39:

14. — Տեր Յովանին Առաջնորդ, 1280? — Եսրու. էջ 42 (20):

15. — Խաչուսուր Վրդ. Ահշառուցի, Ճահօթ մատենազիր. Նկարիչ և զրիչ. 1299? — Խաղբականք, Բ., էջ 32-40. Այրարատ. 267-8:

16. — Տեր Յովանին, 1364. — Այրարատ. 267:

17. — Գալուս Աբելոյ, 1491. — Գեղարքունիք, էջ 48. Խաղբականք, Բ., 46:

18. — Փիլիպոս Անպ. Կհշոնիցի, 1561-78. — Խաղբականք, Բ., 46-7. Գ., 139:

19. — Յովանին Առինիլուսու, չ. 1650. — Խաղբականք, Բ., 48:

ՄԵՂԿՈՒԹԱՅԻՆ. — Մշտկութային աշխատանքները կեչառոք ինչ կը թուի թէ պատահական երեսոթ մը եղած են: Գրչի գործիչներէն քանի մը անուներ միայն ունինք յիշատակելիք այսպէս:

Ա. — Ազգէ Գրիչ, 1184ին օրինակած է Կունդ Առաջնորդ յարիւած Պուլկասի և Յովանին Աւետարամիւնուն Մեկնութիւնները. Ասաւածատուուր Արեգակի համար. — Հայուպատում, էջ 399:

Բ. — Գալուսու Աբելոյ, Գրիչ. որդի Սամանէլ Բահանայի, 1491ին օրինակած է բուրգուով:

Դ. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԵՂԻ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պէյուր, 18 Փետրվար 1963

Անն. Տ. Կիլիկ Արքապա. Տերեկիան

Պատրիարք Հայոց

Երևանիկ

Խոր յաւով կը գումբեն Տաճ Կիլիկիոյ
Հայուսիք Ծննդապարդ Տ. Տ. Զարհ Ա. ի
ամեամուսնակ վախճանումը, ու տեղի ունեցած
այսօ, Եւրուսաբրի, Փետրվարի 18ին, որի
կորուսմի նետեամինով: Վեցին օժման ա-
ռաւողութիւնը պիտի կատարուի Շաբար, 23
Փետր.ին, իսկ բազումի՞ լաջորդ օր:

ԽՕԲԵՆ ԱՐՔԵՊՈ. ԲԱՐԹՈՅԵԼԻ

Երևանիկ, 19 Փետրվար 1963

Դիմ. Տ. Խորեն Արքապա. Բարյոյեն

Կորուլիկոսարան Կիլիկիոյ

Անրիկիս

Խորոպես ցցուցեամի ի լուր Ն. Գենա-
ֆառութիւնն յունկութակի վախճանումին: Մեր յուրին վետակցութիւնը՝ մեր ամեսու-
նոյի եւ ողբացեալ եպրօյ շարհ Կորուլի-

1. — Աւետարան, Ժագագաթի վրայ, Հեկարագարդուած Մէրտչի կողմէ. — Արք-
քառասինց, Գեղարքունիք, էջ 397 (13): Խոզ-
րակեանք. Բ. 46:

2. — Աւետարան, Ժագաթի վրայ. — Գե-
ղարքունիք, 48:

Գ. — Փիլիպոս Եպս. Կեչառեցի, Նկա-
րիչ, ուսուցիչ՝ զրիչ և ծագող Գեղամեցի
Առաքել Առաքառագի (1578-89). 1561ին
Հեկարագարդուծ է Աւետարան մը. զրուած
Ժագագաթի վրայ, զնուած Մատթէոս Արքէ,
պիտիզոսի կողմէ. — Խաղրակեանք. Գ.,
էջ 139.

Դ. — Մատթէոս Գրիչ, չ. 1575ին,
Փիլիպոս Եպիսկոպոսի ուսաջնորդութեան
չըջանին, որինակած է մէկ Արքոց —
Խաղրակեանք. Բ., էջ 46-7:

Ե. ԵՊԱ. ԾՈՒԱԿԱՆ

իսով մանուան առքիւ: Ասուած յափե-
նուկան նանգիս պարզեւէ իւ նուզոյն եւ
պահպանն Կիլիկիան Արքութ: Անձամբ ներ-
կոյ պիտի ըլլանք յաղարկաւորութեան:

ԵՊԻԾԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵԿԵԿԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 3 Փետր. — Բարեկենդան Առաջաւորի
պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յա-
րութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժա-
մարարն էր Հոգչ. Տ. Վաչէ Արդ. իգնատիանսան:

● Ուր. 8 Փետր. — Նախատօնակին ի Ս.
Յակոր Նախագանեց Լուսարարապետ Գերշ. Տ.
Հայրիկ Եպու:

● Եր. 9 Փետր. — Ս. Սարգսի օրավարին: Ս.
Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս.
Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ.
Տ. Յակոր Վարդ. Վարդանիսան: Ս. Պատարագէն
Կոք կատարուեցաւ Հոգինանգստեան պաշտօն:
Ս. Աթոռոյու և ազգիս հանգուցեալ մէծ անուն
բարերար Գալուստ Կիւլուկնիկեանի հօր Սար-
գիս Կիւլուկնիկեանի հոգւոյն համար, Նախա-
գանութեամբ Գերշ. Լուսարարապետ Ս. Հօր:

● Կիր. 10 Փետր. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յակոր: Ժամարարն էր Հոգչ.
Տ. Կաքիսան Արդ. Պատուէրիան:

● Կիր. 17 Փետր. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ
եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գէորգ
Վարդ. Նազարեան:

● Գչ. 20 Փետր. — Ամեն. Ս. Պատարիարք
Հայրը Նախագանեց Մայր Տաճարին մէջ զաշտր-
ւած Վարդանանց հանգիստաւոր Նախատօնա-
կին:

● Եչ. 21 Փետր. — Ս. Վարդանանց օրավա-
րոց 1036 վկանից տանը պաշտուեցաւ Մայր Տա-
ճարին մէջ մէծ հանգիստաւոր թեամբ: Ընկալ-
եալ սախութեան համաձայն, Աւագ Սեղանին
վրայ պատարագեց ժառանգաւոր Վարժարանի և Բն-
ածայարանի Տեսուչը՝ Հոգչ. Տ. Յակոր Վարդ.
Վարդանիսան, և քարոզեց, բնարան ունենաւ-
ով Հայր մէր Ասուրը զեւստարանն գիտեմք:
և մայր մէր զեւստարական եկեղեցից: Յոյց
տաւան Վարդանանց պատերազմը իրրե խզնի
և Հայրինիքի ազատութեան համար մղուած
ամեննեն սիրալի ու սրտառուչ հերոսամարտը:
և մէր առաւ ժողովուրդներու զայտակաման

համար Կիւլուկն վեր արժէքներու զերին խո-
րացէս գիտակցող Աւարայրի մարտիկներուն
վահմ զագագաթիր մը տարածման և վահմ
ուկրանունեներու պաշտօնանութեան ի խնդիր
խիզախելու զանձաւի պիտի, որուն կարիքը
զգալի է առաւել ժառն երբեք այսօր, Սփիռոքի

անկայուն ու ազգային տեհանկետէ աննպաստ պայմաններուն մէջ մանաւանդ: Քարոզէն անմիջապէս ետք կատարուեցաւ Հայրազելուական Մազթանը: Ամենայն Հայոց Հայրազելուան Ս. Օժութիւն Տ. Տ. վազգէն Ավի անուան տօնին առնիւ, նախազահութեամբ Գերշ. Տ. նորայր Եպոսի: Ս. Պատարազի ընթացքին, ժամանգ, վարժարանի բովանդակ ուսանողութիւնը ստացաւ Ս. Հազորդութիւն Խոկ Ս. Պատարազէն ետք կատարուեցաւ օրուան յատակ հազենանդասեան պաշտօն, զարձեալ նախազահութեամբ Գերշ. Տ. նորայր Եպոսի:

● Արք. 22 Փետր. — Բատ սովորութեան, Ս. Պատարազ մասուցեցաւ Ասուրոց Ս. Մարկոս Ավետարանիչ եկեղեցեցոյ մէջ: Պատարազեց և քարոզեց Հոգչ. Տ. Արշակ Արզ, Խաչատուրեան, ընարան աւնենալու վեւ մի թագուր բայց սացքացիւ ի քեզ, խօսելով առ Ասուրուած վասահութենէն բխոց յոյսին կնիւարարու ու այլակերպիչ զօրութեան մասին: Ս. Պատարազէն ետք, Միաբանութիւնը պատուափեռեցաւ Ասուրոց Գերշ. Եպոսին: Եթի ու զարձի թափորներուն նախազահց Գերշ. Տ. նորայր Եպոսի:

● Եր. 23 Փետր. — Բատ սովորութեան, երեկոյեան Ժամերգութեան ընթացքին Մայր Տաճարի խորաններու ու զինաւոր սորանիարները վարագութեցան:

● Կիր. 24 Փետր. — Բոլի քարեկենալան: Փակեալ - խորանի Ս. Պատարազը մասուցուեցու Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամերարն էր Հոգչ. Տ. Յովոնէփ Վրդ: Մամուր: Դոկիրք երգեցին վարը ատեանի մէջ: Ի բացուկայութեան Գերշ. Լուսաբարազեան Ս. Հօր (որուն իբաւանքն է Կարբազետի պաշտօնը վարել Բան - Բարեկենդանի օրը), Դորրազետի պաշտօնը կատարեց Հոգչ. Տ. Յովոնէփ Վրդ:

● Կը. 25 Փետր. — Մայր Տաճարին մէջ պաշտօւած Տեառնիրներաչի մեծահանգէս նախատօնակին և անոր յաջորդող Անդաստանի նախազահց Գերշ. Տ. նորայր Եպոսի:

— Գերշ. Արքազանը նախազահց նաև զիշերասկերին Մայր Տաճարին մէջ պաշտօւած Եկեղեցին և Հնկման կարգերուն:

● Գը. 27 Փետր. — Տեառնիրնալաց: Օրուան Հանդիսաւոր Ս. Պատարազը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. նորայր Եպոս. Պաղարեան և քարոզեց, ընարան ունենալով Եկայլք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանդուցից զենք (Մատթ. Ժ. 28): Յայունեց թէ ամէնքս ալ բեռնաւորուած ենք այլազան հոգերով, որնցմէ ամենազամանն է մեղքին բեռք, որ կը ժանրանայ մեր խզներուն վրայ, և զօր Քիրսուս միայն կրնայ բանալ: Խօսելով ներկայ ժամանականերուն մարդոց որոշ պասակարգերու կոսմէ կրօնքի գէմ մզուած պայքարին, ըստ մէ անոնց ճիզերը սահմանուած են մնալու անորդուուց, քանի որ մարդ ի բնէ կրօնական էակ մըն է, ընդունակ՝ հոգես ներշնչումներու:

● Եշ. 28 Փետր. — Տեառնիրներաչի ամայսարի զուգագիուած ըլլաւոզ Մեծ Պահանձին Զորեքարթիին, այս առաւոտ կատարուեցաւ Արեագալչի առաջին ժամերգութիւնը: — Խոկ Կեսօրէ ետք կատարուեցաւ պատճին ժիազազական ժամերգութիւնը:

— Երիկուան Ժամեր Ե. Յ. Բայր, Տաճարին մէջ պաշտօւեցաւ Մեծ Պահանց առաջին Հակուլը:

ՊՈՇՏՈՒԱՆՆԵՐ

● Արք. 1 Փետր. — Հոգչ. Տ. Գայիթ Վրդ: Ամանակեան Հնդկաստան մեծնուած ըլլաւոզ, իր ահզ Աւագ Թարգման Նշանակուեցաւ Հոգչ. Տ. Կամբասա Արզ. Պատուերեանը: Խոկ Ա. Յարարամեան Տաճարի Տեսչութիւնը յանձնուեցաւ Հոգչ. Տ. Մաշտաց Վրդ: Բարիլուսեանի:

● Եշ. 11 Փետր. — Հոգչ. Տ. Գերոյ Վրդ: Ս. Աթռա վիրազարձաւ Պարսկաստանին, Հոգչ. Հինգ ամբաներու բացակայութենէ մը ետք:

● Եշ. 18 Փետր. — Գիշերուուն Ժամեր Ցին: Անմիլիասուն Ս. Աթռա հասու Մեծի Տաճն կիկեսոյ Կաթողիկոս Տ. Տ. Զարեհ: Ա. Վ. Վախուն գումազ Հեռազգիրը: Մայրավանքի մէջ զանգը անմիջապէս, ընդհատ ընդհատ զարկերով: Բաթարեր լուրը հաղորդեց Բալորին: Յաշորդ օրը, իրրե սոյոյ նշան, մակ մնացի: Յորդանանի Բուլոր հայ զորոցները և ազգային հաստատութիւնները:

● Արք. 22 Փետր. — Ամեն. Ս. Պատրիարք Հայուրը, Լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպոսի: Գաւազանակիր Հոգչ. Տ. Գեղամ Արզ. ուղեարգեցան Գէյրաւթ, ներկայ ըլլաւու համար Արիկիրիոյ Աթռանի Հայրազեան Տ. Տ. Զարեհ Ա. Վ. Վիշերին օծման և թագման կարգերուն կերպարան Աթռանի:

● Կիր. 24 Փետր. — Խուամաց Բամազանի (Ել - Ֆիբր) տօնին ասիթով, Գերշ. Տ. նորայր Եպոսի, ընկերացութիւնը Հոգչ. Տ. Յակովաց Արշակի և Տիգրան Կարպատի և Տիգրան Կարպատի միանդէ վահեմ Մուշավազքին, Միքաթիին, Արեւադան Յորդանանի Ապահովութեան Ընդհան Գետի: Կրօնական Կործաց Պայմազամին, Պաղարազետին, նոր և Հին Քաղաքաբ Աստիկանապետներուն, նախկին Կառավարիչ Անուար նույնէպիի և Առաւական Արաբիոյ Հիւպատոսունի:

— Նոյն ասիթով, Պատրիարքաբանէն Հնորհաւորական հեռագիրներ զրկուեցան ն. Վ. Ե. Թագաւորին, վահեմ Վարչապետին, նոր և Հայրակայտին, Երեքակայտին նախազան Սահմանակարգին, Երեքակայտին, Երեղանեան Զօրաց Ընդհան Հայուն կիրակին Վարչապետ Պահամաթ Թաթինունի և Երաւազէմի նախկին Մուսամաթը Հասուն Քէթիովի:

ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՃԱՌԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 49ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Յարգելի ժողովականներ
և Բարեկամներ,

Այս սրահին մէջ հաւաքուած ենք այսօր,
զամարելու համար Հ. Բ. Ը. Միութեան 49րդ
Ընդհանուր ժողովը:

Ազգասիրական լուրջ պարտականութիւն
մըն է որ հաստարելու հրաւիրուած ենք, երբ
հայութեան մեծագոյն հաստատութեան տար-
ուան մը կեանքին, այսինքն 19.1 չքչանին,
համապատկերը պիտի ունենանք մեր առջև,
անոր իրագործումներով պիտի սպասուինք և
անոր ամրաւթեան, առաւել և բարգաւաճան
համար պիտի խորհրդակցինք միասին:

Մեր պանծալի Միութիւնը քանի մը ամիսէն

պիտի բոլորէ իր հերդ տարելիքը: Ազգին Արհմատահայ հատուածին համար, որ զարերով
իր հայրենի բնագաւառին մէջ ամէն տառա-
պանքի, Հայածանքի, Հարստահարսութեան են-
թարկութել վերջ, չուրջ կէս դար առաջ չար-
գակոսոր եղաւ և այսօր վերացուած է Սփիու-
քի, մեր նախախանամական ընկերութիւնը մի-
ւնաթեան զօրաւոր կատ մը, յայսի ազգերակ մը
և առաջնորդող փարսու մը ձանցուած է միշտ:
Մեր հեղուղինքին վերջ, Հ. Բ. Ը. Միութեան է
որ ներկայիս աշխարհի ամէն կողմերը ցիրու-
ցան հայութեան համար համազգային միակ
կազմակերպութիւնը կը հանդիսանայ, որուն
զրոշին տակ կը ժուռթան համախմբուիլ ու
զործել մեր բեկորները, ուր որ ալ զոնութիւն:
Հեռաւոր Արեւելքի մէջ, Աւոտրալիոյ Սիսնի
քաղաքին նորանաստատ ժորքիկ հայ գա-
ղութը, օրինակ, նոյնիսկ հազիւթէ իր եկե-
ղեցին ունիցաւ, ինքնարերաբար կազմեց նաև
Բարեգործականի իր մասնաճիւղը: Այս սրա-
ռուջ պարագան բացարկի զեպք մը չէ, այլ
մեր ինքնազանանման բնազգին զօրաւոր
արտայայտութիւններէն մէկը, ամէն կողմէ:

Հսու հաւաքուած ենք ուրեմն, ազգային մեծ
կազմակերպութեան մը զործերը քննելու և
զայն միշտ կենսունակ, անսասան և իր յա-
ռաջիւղացքին մէջ ամրապինդ պահելու մի-
ջոցներուն վրայ խորհրդակցինք համար:

Միրով և շնորհազարտ զգացումներով կ'ող-
ջունեմ մէկ բոլորդ, որ եկած էք նույիրական
պարտականութիւն մը կատարելու: Զեզի հետ
միասին երախտազիւտութեամբ կ'ողջունեմ
նաև արտասահմանի մեր հարիւրաւոր մար-
միններուն իրաւասու անզամները, որոնք փու-
թացած են փախանորդագրերով իրենց ձայնը
լուիլի ընել այս պատկանելի ժողովին մէջ,

այդ կերպով իրենց բնդվզումն ու ցասումը
յայտնելով տիսուր երկոյթի մը հանգեց, ո-
րուն պիտի անզրադառնամ քիչ վերջ:

Նախամուտի այս խօսքերէս ետք, կը փա-
փաքիմ չատ համաստակի կերպով մեր Միու-
թեան արտասովոր վերելքին մէկ պատկերը
տալ, խօսուն թուանշաններով, աղա ներկա-
յացնել մեր չի գերը անոր միամականութիւնը
անխախտ պահպանելու համար, որպէսզի ա-
ւելի յատակութեամբ ըմբռնէք ներքին գուա-
րութիւն մը որուն գլխաւոր ծալքերը պիտի
պարզեմ ձեր առջև:

19.0Ւ Ընդհանուր ժողովին մէջ մասնաւոր
կերպով ծանրացած էի այն հսկայաքայլ յա-
ռաջդիմութեան վրայ զոր Բարեգործականը
կատարած էր իր կեդրոնը 1940ին նիւ եսրը
փոխազրուելէն ի վեր, միանգամայն շեշտելով
թէ որքան վճական եղած էր Ամերիկայի մեր
կազմակերպութեանց զերը այս անօրինակ
վերելքին մէջ: Խակ 1961ի Ընդհանուր ժողովին
լայնորն բացատրած էի Միութեան իրաւա-
կան անձնաւորութեան, կանոնագրական բա-
րեփոխութեանց և պատշաճութեաներու վերա-
բերեալ հարցերը, որոնք կազ ունին մեր զոր-
